

ՊԱՍՏՆԵՐ

Գիտակց ճաբար օրեր կը հրատարակուի: Բաժանորդագրութեան տեղին է Ակոբեան-խան Թիւ 15. Անվճար նամակ չընդունուիր

Պ Ի Տ Մ Ա Կ

ՊԱՍՏՆԵՐ

Տարեկան գին երեք մկն. Գ 60 Պոլսոյ եւ Կառնայ համար (փոսթի գինը լրագրոյս վրայ) Հասին գին . . . Փր. 50 Ծանուցման տղ. 5. Գրո.

Լ Ր Ա Գ Ի Ր

Ա.Զ.Գ.Ա.Յ.Ի.Ն., ՈՒՍՈՒՄՆԱ.ԿԱ.Ն., ԵՒ ՔԱՂԱՔԱ.ԿԱ.Ն.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ազգ: — Նամակ ուղեւոր առ օրհորդս: — Կինն եւ Ամերիկա: — Նամակ հաշարեալան: — Ամերիկայի մէջ երկրակառուարին: — Յաւաթի հրածոց մը: — Չինաստանցի բանակեալ: — Քաղաքական: — Խառն լուրեր: — Ծանուցումներ: — Առեւտրական, — Իրանական:

Ա. Զ. Գ.

Մեծ. Տոբոլսի Պ. Մատթէոսեան հանրածանոթի հարցոյի բժիշկը՝ որ քանի տարիներէ ի վեր Գուլէ դափու Հէնտէկ փողոցը կը բնակէր, այժմ իր բնակութիւնը փոխադրած է Բէրա Աղա-ճամբի մաս Սողըղ աղաճի ճատուն թիւ 12 տունը:

ՆԱՍՏԱԿ ԲՈՎԱՆԱ ԱՌՈՐԴՈՐԿՈՒ

ՆԱՍՏԱԿ ԵՐՐՈՐԴ

ՈՒՍՏՈՒՆԻՔ ԵՒ ՀՄՏՈՒԹԻՒՆՔ

(Շարունակարիւն shu թիւ 119)

Կրիներն տունը ճամբուս վրայ բլլալով, միշտ առջեւէ կանցնէի և հագիւ կը յիշեմ բացօդայ գեղեցիկ իրիկուն մը, որ առեւտրիկին հիւրերով խոնկեալ չըլլար, — միշտ հիւրասնոցիկն փատաւորապէս լրսաւորեալ և զուարթ ընկերութիւն մը մէջը կը հրճուէր, — սակայն ամէն անգամ որ անցայդաշնակը մի և նոյն եղանակները կը հնչեցնէր, — *Sozu Poshukero* իր մասերովը, *Փրակայի Մարջը*, չեղաւ որ ասոնցմէ տարբեր եղանակ մը չալուիլը լսէի այդ տունէն: Եւ անտարակոյս եմ որ, միշտ մի և նոյն զրծագրութեան պահարանը կը ներկայացուէր եկող հիւրերուն՝ տեսնելու, զմայելու և զովեան կարողաւ համար, և կամ զուրէ տեսնեմէ ընդօրինակեալ նոյնպէս թեթև բաներ, քանզի շարունակ ձեռք ձեռք շրջելով անշուշտ կազատուէի և կը մտաշէի:

Օր մ'ալ լսեցի որ օրիորդ ճորձխան աղէկ մէկու մը նշանուէր է, և շատ չանցաւ ամուսնացաւ: Տղան մասնաւոր ճաշակ մը ունենալով թէ երածառութեան և թէ զծագրութեան, երկուքն ալ շատ կը սիրէ եղեր, և տեսնելով թէ իր սոսաճ ամուսինը այս երկուքն ալ սովորած է, չափազանց ուրախ էր և շատ կը սիրէր զայն: Իշը երկու տարուան աջ և կին էին, եւ միտքս զրի ստոնց վիճակը ստուգել, որպէս զի տեսնեմ թէ ինչպէս յառաջ կերթան: Իմանալով որ մանչ զաւակ մը ունեցեր է, և զիտի ալ որ շատ ուրախ պիտի ըլլայ երբ ես գայն տեսնեմ, օր մը ելայ զացի, այր և կին շատ սիրալիր ընդունելութիւն ըրին ինձ:

Նայեցայ որ հին դաշնակին վրայ տակաւին կը կեցայ միևնոյն զծագրութեանց հին պահարանը. խրոզրեցի տիկինէն որ շնորհք ընէ ինձ և բարեհաճի դաշնակով քաղցր եղանակ մը նուագել: Սյրը հառաչելով մը բաւ ինձ թէ՛ ճորձխան երածառութիւնը ծալեց պլորեց և մէկդի դրաւ: Աչքս վերուցի և տեսայ պատերուն վրայ կախուած Սամուէլ մանկան և Հնդկաց մեղանով զծուած նաւաբեկութեան ահուելի տեսարանին պատկերները: Ա. փոստս բախ մտացս մէջ, ահա սա շուրջս զտեսածները՝ զիշերթովի վարժարանի մ. ջեռամեայ ընկնացք կատարող ուսեալ օրիորդի մը բոլոր սովորածներուն մնացորդ արխուր յիշատակութիւնքն են. որոյ նուագած Փրակայի Մարտին արխուրակին ձայներն ալ յիշողութեան դաշտերէն արձագանգ կուտան միայն:

Արդ Ազնիւ օրիորդը, կարծեմ թէ հարկ չկայ ճիգ թափել իմ կողմանէս զձեզ հաւատարմացնելու թէ. այս ըրած նկարագրութիւնս ամենայնիւ ճիշդ է. քանզի վստահ եմ որ անոր նախնական օրինակները դուք ևս պինդ շատ անգամ տեսած էք բուն ձեր ծանօթներուն մէջ: Ի՞նչ կը խորհիք և ի՞նչ կարծիք ունիք այս կերպ և այս տեսակ բան սովորելու վրայ, — քանի՞ ստակ կարծէ անկիս: Իմ գաղափարս այս է որ, այդ վիճակը ամէն բանէ աւելի կազարտէ և կը վնասէ կնոջ մը վարկն ու կեանքը: Ես այս պատմութիւնը յառաջ բերի ձեզի հասկցնելու համար թէ՛ որչա՞փ վնասակար և աղարտիչ բան է հարեանցի կամ կիսկատար ուսումնարք, և թէ որչա՞փ հարկաւոր է բանը հասկնալով և ըստ ուսանել, որպէս զի մտքերնուդ մէջ աղէկ տեղաւորուի և ցիտան յարատ: Երածըչաական օրինաց և կանոններուն առանց քաջ հմուտ ըլլալու և առանց ըստ հասկցողութեան քանի մը եղանակներ սովորի և չալելը, այնքան ծանր գործ մը չէ:

Անանկ ալ կրնայ մէկը առանց շատ դժուարութիւն կրելու ուսուցչին օգնութեամբ քանի մը պարզ բաներ զծագրել, և քիչ մը Գաղղիարէն սովորել, բայց նոյն իսկ երածառութիւնը իբրև գիտութիւն ուսանել, և անոր գործնական կանոնները ըմբռնել ու ձեռաց կատարեալ վարժութիւն ստանալ, և անանկ որ ամէն առթիւ կարենայ դէմը ելած եղանակը հասկնալ և յաջողակ կերպիւ չալել, ասիկա այնքան դիւրին բան չէ: Անանկ ալ մէկը՝ որ արհեստին զօրութեանը թափանցած չէ, չի կրնար բնականէ՛ միայն հետուէն նայելով, զծագրութիւն ընել: Գաղ-

ղիարէն լեզուին ծուծը հանելու, — ես անկիւ սովորեցայ և զիտեմ բոլոր համար, — մեծ աշխատութիւն պէտք է, վեր ի վերոյ աշխատութեամբ մարդ լեզու չի կրնար սովորիլ:

Բան մը իրօք և կատարեալ սովորելու համար, կամ ուրիշ խօսքով, ո և է բանի մէջ կատարեալ և իրական հմտութիւն ձեռք բերելու համար, սաստիկ աշխատանք պէտք է, բայց այս կերպով անգամ մը ձեռք բերուած բանն ալ, այնուհետեւ այն անձին իրական մէկ հանգամանքն է. թէ որ ինչ այդ սովորած բանը բարձի թողի չընէ, ուրիշ կերպով անհնար է մոռնալ, կամ չի հասկնալ:

Եւ արդ ներքեցէք ինձ որ հոս հետարքրողական գաղտնիք մը բացատրեմ: Ընդհանրապէս ամուսնացեալ անձանց շատերուն աչքը կը նայիս զուրսէ և կը թողուն իրենց բնուանիքը երեսի վրայ և այլոց ընկերակցութիւնը կը փնտռեն, և շատ անգամ վարքերին բարքերին ալ կապականի և կը զեշնայ: Ի՞նչ է ասոր պատճառը, ինչո՞ւ անոնք ասանկ կրնեն: Ուրվետեւ կեանց այն ամէն ցանկալի հաճոյքները և քաղցրութիւնները, զորս իրենց զատարակեալ և կիրթ կարծած կանանց շնորհիւ կը վայելէին, հառաճ և սպառած են: Գաղտնի վրայ քանի մը եղանակներ՝ որ թուովակի պէս սովորած էին, և շարունակ կը չալէին, նոքա կրկին կրկին լսելով, ալ կը շտապան, ձեռակերպի մէջ ունեցած հանճարին՝ բարձր ընտանեկան գործերէն շատ լաւ պարզուեցաւ, տեսան որ իրենց ակնկալածէն շատ տարբեր է եղեր անոնց մտացը վիճակն, բոլոր գիտցածուն ետին եկեր է. բնաւ համ հոս չիկայ անոնց ընկերակցութեանը մէջ: Աւետալ և հմուտ օրիորդաց հետ ամուսնացան, բայց կը նային որ երբէք նոր շարժում մը չկայ երեսուն և ոչ իսկ յառաջացում: Արդէ խելքերին տեղ կընէ որ, այն ակնկալած բարձր կատարելութիւններէն մէկն ալ չկայ իրենց կնիկներուն քով, բնաւ ոչ մէկ կարողութեան անք է: Թէ որ երբէք կարել կցուկ բան մ'ալ սովորած էին, ան ալ ցնկեցաւ զնաց: Հաւկիթը կոտրեցաւ և մէջինը վազեց: Ալ ևս կար և կարողութիւն չկայ անոնց մտացը մէջ առել հասնելի՛ և երջանկութեան ու միտքարութեան վայր մը բնելու և բնականապէս անոնց ալ սիրտը կը պողի անկէ, և բարձր հոգնութիւն մը չեն զգար ընտանեկան ընկերակցութենէ, ուստի կը հարկադրին ուրիշ ընկերութեանց մէջ փնտռել զայն:

(Շարունակելի.)

ԿԻՆՆ ԵՒ ԱՄԵՐԻԿԱ

Հանրապետական այս ծաղկեալ և երջանիկ ժողովրդեան մէջ կինը ինչ զիրք կամ ինչ սրաշուն ունի, և ինչ աջօք կը նային անոր վրայ, հետևեալ յոգուածին մէջ, որ հոչակաւոր Գանիէլ Ուէպոթէրի զրէն նրած է, շատ վաճաճ սճով նկարագրուած է, և մեր ազգային արդի գիւրջին համար նկատուած թեան առնելու ամենակարգի որ և նախնական խնդիր մի է, Եւստով ներք որ շատերուն մտացը պիտի զարնէ այս կէտը, և պիտի ինկարգուին ձեռք տունեղ զայն իրև խնդիր որ օրծնական ու պիտի ընեն ամէն ինչ որ պէտք է ընել մեր ազգին մէջ մայրերը այդ զիրքին վերածելու:

«Կինը ազատ կառավարութեան մի յարատես թեանը և սրահայտութեանը նկատմամբ իւր սպարտաւորութիւնը կը կատարէ ժողովրդեան մէջ մտքոր և ուղիղ բարոյականի օրինակ ըլլալով, և ի մասնաւորի նորա մանկուհիք իւր բաղկացը մէջ կրթելով և դաստիարակելով: Յայտնի և անսթիտակի ճշմարտութիւն մի եղած է թէ, ժողովրդական ազատութիւնը և ազատ Սահմանագրութեան մի յարատեսութիւնն՝ զայն վայելող հասարակութեան առաջինութիւնն և կրթութիւնն կախեալ է, ինչպէս պէտք է ներշնչել այդ առաջինութիւնն, և ինչպէս պէտք է սալ այդ կրթութիւնը: Անդամ մը Պանախարիտ հարցոյց Տիկին Սթոյլի, «Ինչպէս կրնամ Գաղղիոյ երջանկութիւնը յաւերժական ընել,» «Կրթէ, պատասխանեց նա, Գաղղիոյ ժողովրդեան մայրերը:» Նորա այս պատասխանը ի է քաղաքացիական կատարեալ հմտութեամբ:

Մարբերն արդարև մարդկային ազգի գործակալը և իսկական դաստաստաններն են. Մայրը կը սկսի դաստիարակել իւր որդին իւր բաղկաց մէջ: Նա է որ նորա մտքին և հոգւոյն առաջին բարեխումբներն կ'ուղղէ, նա է մանկութեան եւ սրտաննկութեան փոփոխ հասակին մէջ նորա միտք առաջնորդն և կը ճգնի զերծ պահել զայն կենաց դժնդակ պատերազմներէն և ազմկալից տեսարաններէն մտքրական անզուգական սիրով և ինտմաք զինելով զայն բարի սկզբունքներով:

Եթէ մեր նկատողութեան շրջանին մէջ առնու մը քաղաքակիրթ ազգի մի մ. յրերն, ինչ կը անանկը. ահա այնչափ գործաւորներ որք կ'ալաւսալին ոչ թէ շնչին և վաղանցիկ նիւթի մը

վերայ, այլ անմահ սիրտերու վերայ, կազմ և կերպարան տալով այնպիսի էակաց, որք պիտի ապրին յաւիտեանս կը ծափահարեմք այն արհեստագէտը, որոյ հանճարն ու ճարտարութիւնը մարդու կեզմ նկար մի կը ներկայացընէ մեզ կտառի մը վերայ. զարմանօք կը հռչակեմք նաև այն քանդակագործին անունն՝ որ նոյն պատկերն կարծր մարմարինի վերայ կը քանդակէ: Բայց որչափ աննշան են այս գործերն, թէև արհեստից գեղեցկագոյնն իսկ են, բազմատեղով մարց բարձր կոչման հետ: Նոքա կ'աշխատին ոչ թէ այնպիսի կտառի մի վերայ որ պիտի կորնչի, ոչ թէ այնպիսի մարմարինի մը վերայ որ փոշի պիտի դառնայ, այլ մտաց վերայ, հոգւոյն վերայ որ պիտի ապրի յաւիտեան, և որ պիտի կրէ միշտ, ցորչափ կ'ապրի, մօր մի կերպարանիչ ձեռքէն ընդունած բարի կամ չար տպաւորութիւնները:

Աշխարհ համայն կ'ընդունի թէ մեր երկիրն օրհնող ազատ օրինաց տեսողութեան ապահովութիւնն՝ առաքինութիւնն է, զիտուութիւնն և դաստիարակութիւնն է կախում ունի: Գիտութիւնը չ'ունի իւր մէջ ինչ որ կը պարունակէ դաստիարակութեան ընդարձակ բանը: Պէտք է կրթել զգացումներն, պէտք է չափաւորել կիրքերն, պէտք է տպաւորել ճշմարիտ և հաստատուն սկզբունքներ, պէտք է ներշնչել կրօնական խորին զգացումներ, և տալ մարդու բարոյականութիւն մի: Սոքա ամենքն կը պարունակուին դաստիարակութեան մէջ: Այն մայրերն՝ որք հաւատարիմ են առ իւրեանց բարձր կոչումն, պիտի ըսեն իւրեանց զուակաց, թէ ոչ քաղաքական և ոչ ուրիշ գործի մի մէջ կըր նայ մարդս ինքզինքն ազատ կացուցանել իւր խղճին և իւր պարտուցն ունեցած պարտականութիւնէն, պիտի ըսեն, որ թէ իւրեանց, թէ հասարակաց վերաբերեալ և թէ անձնական գործառնութեանց մէջ միշտ արգար պատասխանատուութեան մի տակ են և թէ և ոչ մի օրարգայի տակ ներելի է իրենց անտարբեր աչօք նկատել իւրեանց կարևոր իրաւունքներն և պարտաւորութիւնքն:

Նոքա պիտի տպաւորեն իւրեանց որդւոց մտաց վերայ թէ ընտրելու ազատութիւնն ի գործ դնել ընկերական պարտաւորութիւն մ'է, զոր կատարելու կոչուած է ամէն ճշմարիտ անձն, թէ մէկը չի կրնար առանց արդարութեան դէմ մեղանշած վնասելու յոյնչ համարել իւր քուէն, թէ իւր քանչիւր ազատ ընտրող պատասխանատու է ինչպէս իւր անձին՝ նոյնպէս նաև այլոց առջև, և թէ որ մարդ կամ ինչ գործողութիւն որ ինքն կը պաշտպանէ, կարևոր ազդեցութիւն մը ունի ինչպէս իւր՝ նոյնպէս և այլոց շահուց նկատմամբ: Սոքա նման բարձր և մաքուր բարոյական սկզբունքներ ներշնչելով է որ ազատ հասարակութեան մի մէջ կրնն կը կատարէ իւր նուիրական պարտաւորութիւնը և ի գործ կը դնէ իր ճակատագիրն:

Ինչ որ ճշմարիտ է Ամերիկայի կամ Գաղղոյ համար, ճշմարիտ է նաև ամէն աղբաց համար, մեր աղբին համար ևս: Քանի որ անվայթ գոնութիւն սիրեալ և մերթեալ սեռին (ինչպէս կը կոչէր զերջինի սեռն, մին ի բարեկամացս, իւր

այն կարևոր նիւթին վերայ ատենաբանած ատեն) դաստիարակութեան նկատմամբ, քանի որ չ'ունիմք դաստիարակեալ և դաստիարակելու կարող մայրեր, քանի որ կը պակաս մեզ այս ծնելական ազդու ձայնն, մարդու սրտին խօսող ձայնն որ քարոզէ իրաւունք և պարտք, մեր յառաջագիմութեան քայլերն միշտ գողգոյնն, միշտ առ խորխոր պիտի լինին, ազգային համբարախուրթիւնը, ազգակցաց սրտերն միայնող այդ նուիրական կապը, միշտ խղեալ պիտի մնայ, և անկարգութիւնք, խռովութիւնք, որոց ամենէն աւելի զոհ եղած է մեր դէմ. բազմ ազգը, պիտի լինին մեր միակ բաժինն: Երանի թէ վերահասու լինէսք կատարելագէս սոյն անուրանալի ճշմարտութեան, և փութայինք քաղաքակիրթ ազգերէ օրինակ առնուլ մեր նորասիրութիւնը շողոքող բաներէն աւելի, նոցա յառաջագիմութեան, նոցա երջանկութեան հիմնական պատճառն եղող մարց դաստիարակութեան համար տարած իննամքն, դաստիարակութեան ընծայած մեծ յարգն և այն մեծ կարևորութիւնը՝ զոր տակաւին հազիւ հազ կրնայ մեր միտքն ըմբռնել:

Թարգ. յԱճԳ. ՎԱՀՐԱՍՄ 1874, սեպտ. 20 Ի Ռուսերթեան վարժ.

Օ Ր Տ Ո Ւ ՆՍՄԱԿ ԲԱՋԱԼԵՐԱԿԱՆ

... Խմբագիր, Դիտակայ 107 թուով կը յայտարարէք թէ, Ձեր դրամական անձուկ վիճակը և թէ տպագրական ծախուց ծանրութիւնը, երբեմն խորհել կ'տան Ձեզ թերթիւնի դադարեցնել: Այս տողերը որք Աղբային ընթերցասիրութեան աստիճանը կը նշանակեն, եկան զգողմամբ խռովել զմեզ, և սակայն ուրախ եմ ըսելու թէ, նոքա չլրացան մարել մեր սրտին մէջ եղած այն ըկերային յառաջգիմութեան կայծերը, և հանրական դաստիարակութեան սէրն ու զգացումները, որք գողցես մեր ապագային տարրական էութիւնը, և սրտերնուս զմայարն են:

Արդարև ցաւ է մեզ տեսնել Հայ խմբագրաց ընդհանուր նիւթական անձուկութիւնը բայց աւելի զառն ցաւ կը տեսնենք երբ կը նկատենք թէ, գէթ երիտասարդութիւնը իւր հաւաքական նշանակութեամբ փոթ չընէր ի սէր դաստիարակութեան, և յ'անուն ընկերական պարտաւորութեան, Աղբային դրական անձանց ծառայութիւնը վարձատրել, կամ նոցա բանի սփոփ ու խորխոյս ընծայել, երիտասարդութիւնը կրննք, վասն զի ամեն ժամանակի և ամեն դարու ժողովրդեան զգացուն մասը կը կազմէ այս դեռահաս սերունդը, և երբ Աղբ մը կը մտաբերէ քաղաքական կամ ազգային նոր քայլ մը առնուլ, անգամ մը կը փութայ իւր երիտասարդաց երեսը հոյեացք մը նետել, որպէս զի չափէ նոցա բարոյական զօրութիւնը, և սրտին աշխոյժը, այլ և փոստ որ Հայոցս համար այս հեռատեսական հայեացքը, տխուր ապագայի մը սարսափելի կաղապարէն և սրտի նորոգ կսկիծէ մ'իլլատ ունին և ոչինչ կնծայէ:

Մենք որ ճակատագրային միջամտութեանց հաւատացողներուն թիւերէն չ'ենք, հեռակէտ մ'ունինք անորոշ և դեռ մեզ անձանթով, յորմէ շատ կը սարսափինք, աջ կողմերն իս աւեր ենք Աղբային դաստիարակութեան, ընկերային բարեկարգութեան, ընթերցանութեան ծաւալման բաղձալի և կենսական խնդիրը, իսկ ձախ կողմերն կը տեսնենք կարգ մը Հայ երիտասարդներու ակումբ մը, որք փութանակ դարուս ուղեոյն համեմատ Հայկական գրագիտաց օժանդակելով մեր աշխարհին նորանոր հանճարներուն ծնունդ ու լոյս տալու, չ'գիտեմ որպիսի անձանթով ձեռքէ մը հրապուրեալ, առաւել հնութեան համակերպելու, և առաւել նախապաշարեալ ընկերութեան մը մէջ ապրելու մի այլանդակ մէտ ու դատապարտելի ձգտում մ'ունին, ապաքէն ասոնք նոր նոր հունտեր են որ կը պատրաստուին հնոյն յաջորդելով, մեզ դառնուլից անցեալ մը վերստին յիշեցնելու: Քանի քանի Հայ ու ընչաւէտ երիտասարդներ տեսած ենք, և կը տեսնենք, քանի քանի զուսմեալ ծերեր տեսած ենք, որք զրեթէ հաւասարապէս իրենց բոլոր կենաց մէջ հազիւ թէ մի քանի անգամ ձեռքերն զիւրք կամ լրագիր առած են. թերևս պիտի զարմանաք դուք, երբ յայտնենք թէ այս վերջնոյն անունը անգամ չ'լսողներ դեռ շատ ունինք:

Հայոց տուններ կան, և նոյն իսկ քաղաքաց մէջ հարուստ տուններ, ուր չես կրնար թերթ մը կամ երկու հատոր գիրք գտնել, դեռ շատերուն համար ընթերցասիրութիւնը եղջերուաքաղ մ'է, Հայը ձմեռուան երկայն գիշերները, ամառուան դեղեցիկ օրերը, իւր տղաքներով ու թուրքներով սովորած է անօգուտ շաղակրատութեամբ և կամ քնով անցունելու. ասոնք ամենքն ալ աղքատ չ'են, եթէ իրենց անձնական ուրիշ վայելմանց վասնած ստակին մէկ տասներորդ մասը լրագրաց կամ օդատկար գիրքերու յատկացնել ուզեն, հիմակուան ընթերցասիրաց և ազգային լրագրաց բաժանորդներուն թիւը առնուազն հարիւր անգամ պիտի բազմապատկուին և քիչ ատենէն գէթ մասամբ մը ընկերային անբարոյակաճութիւնք, խաղամուլութիւնք, և ուրիշ զանազան չարաչուք ունակութիւնք, որք անբնական են և յաւէտ կործանիչ մարդկային ընկերութեան, մեր մէջէն պիտի սկսին անհետ ըլլալ:

Մեր Աղբային ընտանեկան կրթութիւնը, դաստիարակութեան ծաւալումը միմիայն ընթերցասիրութեամբ կարելի է դոյրացնել, քանի երջանիկ է այն ընտանեկան հայրը, որ երբ օրական աշխատութիւնէ դադարած տուն կը վերադառնայ իւր մատաղ դաւերներն՝ ինչպէս նաև չափահասները, շուրջը բարձր գիրք կամ լրագիր կը կարգայ անոնց, քանի նախանձելի է այն ընտանեկան շրջանը ուր կրթութիւն և ողջամտութիւն կը թաղաւորէ, պատմութիւնը որ անցելոյն հայեցելի է, օր մ'ալ Աստի փառքը զըրկած պիտի տանի օտար աշխարհաց վերայ սփռելու, այլ բարէ որ մենք այսպէս հալ ու մնչ եղած, և ապագային համար, ոյն անձանթով հեռակէտին համար, կըսեմ, ուղեղին ճայթնցոյցած, պիտի իջնանք ցորտ գերեզմանի մը տակ բաղձաշարչար դանձերնիս հանգիստ ընելու, այն մարդ-

կութեան մայրը ծերուկ Ասիա թերևս քիչ ատենէն զերուպ պիտի դերագանցէ, բայց մենք արդէն ծածկուած պիտի ըլլանք ցրտասարսուռ և մառախլապատ կափարջի մը տակ:

Եթէ ես, կղեր մը լինէի, Հայաստանեայց Եկեղեցւոյ բեմերէն կենաց բանին հետ, ընտանեկան դաստիարակութեան իւր դարման ժողովրդեան պիտի քարոզէի ընթերցասիրութիւն. բայց երբ ձեռքս գրուլս կը տանիմ՝ հոն կը տեսնեմ որ վեզար չ'կայ, ուստի կը պարտաւորիմ խնամահելով ընդունիլ այն սահմանը, և այն անհասական բաժինը զոր Աստուած կը բաշխէ մարդկային սեռին:

Գաւառական Հայ երիտասարդաց տխուր կողմերը նկարագրել մեզ համար, զրեթէ դժբաղ ծառայութիւն մ'է զոր պարտաւորած ենք ի դործ դնել. ընթերցասիրութիւնը իւր պատշաճ նշանակութիւնէ թափուր կը շրջի դաւառաց մէջ. վասն զի ինչպէս սուրբ ունեցանք յայտնելու տակաւին Հայ երիտասարդաց մէկ մասը կը սիրէ լեցուն քսակով և դատարկ դանձով պտտել, ինչ ըսենք համակերպութիւն մ'է այս, որ թէպէտ աննպաստ բայց տակաւին անարգել զըրմամբ յառաջ կ'ընթանայ:

Մեր Աղբային երիտասարդաց ուսումնական վիճակին տխուր պատկերը մասամբ իւրք Ձեր աչաց յանդիման նկարեցի, հարկ չ'կայ վիճելու թէ մեր հասարակութիւնը որ երիտասարդներէ նուազ կը թիւնուր, որ աստիճան ընթերցասէր է. պէտք է պնդել և կանգունի զարնելով չափել թէ, մեր ընտանեկան կրթութիւնը մինչև ուր հասած է, այս տողերը զոր ցաւօք սրտի դրած ենք, անվիճելի խորոյ թիւններ են. քաւրաւաւսնի չ'է յաւնն աւաւնի է. և սակայն կը միթարուինք միւս կողմն ալ երբ կը տեսնենք փոքրիկ խումբ մը ուսումնասէր պատանիներէ կամ երիտասարդներէ բաղկացած, կը ջանան իրենց կենդանի օրինակով ընթերցասիրութիւնը Աղբին մէջ տարածել, ասոնք աւաղուտ աննպաստի մը մէջ արժան է կոչել ուլտասներ. դժբաղդարար այս կարգի երիտասարդք ընդհանրապէս աղքատ են և հետեւապէս Աղբային գրական անձանց աշխատութիւնը վարձատրելու անկարող, ըսել է թէ այսօր աղքատ հեղինակներ, աղքատ ուսանողներու օգնութեան կարօտ մնացած են: Թող Աղբային խմբագիրը կոկորդ պատուելու չափ պուտան թէ ընթերցասիրութիւն չ'կայ, թող լրագրաց չորրորդ երեսը զրբերու ծանուցումով վատնուին, որոն հոգ, հարուստը կը քնայ, աղքատը անկարող կը վարանի. լուսաւորութեան շռաւուռն թուականն է այս:

Մեծ պարտաւորութիւն կըզանք շնորհակալ ըլլալու խմբագրաց ընդհանուր դասէն, ոչ թէ անոր համար որ հրապարակ երած են՝ այլ վասն զի՝ այս անտարբեր ժողովրդեան վերականգնման թեմանը համար անվատ կը գործեն, մենք զրեթէ լաւ համազուած ենք թէ, հասարակաց ծառայող անձինք շատ մը նիւթական և բարոյական զրկուեցներ տեսնելէն ետքը, զիչերներն անգամ հանգիստ չեն կրնար ննջել. ասոնք ծանր և անվստարիներ զոհողութիւններ են անոնց համար, որք դոնէ վայրիկ մը հանրութեան ծառայած և անոր անողք հարուած:

ներն ու յայդորին բերուաները սրտի ցաւօք ընդունած են, պիտի անհետան այս օրերը, պիտի վերջ տանուն այս աղէտները, բայց դուք խմբագիր տէր երբէք մի յուսահատիչ անվատ յառաջ խաղաղէք, յաջողութիւն կը մաղթեմ Ձեզ:

Մնամ քոյդ. 1874 Օգոստ. 20 ՇԱՀՐԻՄԱՆ Չամ-Պաշի:

Վերոգրեալ նամակին հետ նաև ընդունեցանք հետեւեալ ցուցակը, որ Օրտուի մէջ Դիտակայ յաջողութեանն ու յարատեւութեանը փափաքող մի քանի աղիւ թարեկամք նուէր ըրած են մեզ, այսու խնդրանք որ մենք ևս երկու օրինակ Դիտակ խրիկներ Օրտուի Մովսիսեան և Համազգային վարժարանայ:

Արդարև դովտուր արժան է Մեծ. նուիրատուաց այս աղբասիրական գործը, որ կրկին օգուտ կը պարու- նակէ իր մէջ:

Յուսանք որ նոցանց այս դովերի ընթացքը այլևս օրինակ ըլլայ նման ձեռնարկութիւններ ընելու:

ՆՈՒՐԱՏՈՒՔ

Մեծապատիւ Էփեմիմ

Սրժ. Մէծ.

Խաչատուր ձերմակեան 1/2
Մկրտիչ Թորամանեան 1/2
Յարութիւն Յակոբեան 1/2

Մեծապատիւ աղայ

Առաքել Անդրէասեան 1/2
Բարսեղ Սէրիճեան 1/2
Գասպար Սէրիճեան 1/2
Գէորգ Մարգարեան 1/2
Յակոբ Պոստեան 1/2
Պետրոս Չիլճեան 1/2
Ս. Պօղոս Յ. Փափազեան 1/2
Բարեկամ ոմն » » 1/2

1/2
1/2
1/2
1/2
1/2
1/2
1/2
1/2
1/2
1/2

ԱՍԵՐԻԿԱՅԻ ՄԵՋ ԵՐԻՑԱԿԱՆՈՒԹԻՒՆ

... Խմբագիր,

Աւետարեբի 41^{րդ} թուոյն մէջ այս խորագրով նիւ Եօրի Էյլսմանիսդ թերթին մէկ թիւէն առնուած յօդուած մը կար, որ Թուրքիոյ Աւետարանական եկեղեցեաց վերաբերեալ օգտակար դասեր պարունակելուն համար, Պատ. Խմբագիրը պատշաճ դատեր է անոնց հաղորդել:

Այդ օգտակար դասեր պարունակող աղեղեղութեանց մէջ ամենէն նըշանաւորը վերջին կտորն է, որ կը ցույնէ թէ՛ Ամերիկայէն դուրս օտար երկրներու մէջ հաստատուած երիցու թիւները, ինչպէս Հնդկաստանու, Չինաստանու, և այլ ուրիշ տեղերու մէջ, Ամերիկայի ընդհանուր ժողովին նկատմամբ են եղեր, և ուստի Չինաստանի եկեղեցիները փոխանակ «Աւետարանական Չին եկեղեցի» կոչուելու, «Ամերիկեան երիցական եկեղեցի ի Չինաստան» կը կոչուին եղեր, և Ամերիկայի երիցական եկեղեցիէն կը կառուավորուին եղեր: Թուրքիոյ միտոնարը աւելի լաւազոյն և աւելի օգտակար դասեր են որ բողոքական Հայոց եկեղեցին «Հայաստանեայց Աւետարանական եկեղեցի» կոչուի, քան թէ «Աւետարանական Հայոց Ամերիկեան եկեղեցի ի Թուրքիա»:

Պատ. Խմբագիրին այս դիտողութեան կը հասկցուի որ, Թուրքիոյ միտոնարը այս պատճառաւ չուզեցին և տակաւին չեն ուզեր Հայ Աւետարանական եկեղեցիները երիցական դրութեան ներքե կազմել, որպէս զի անոնք ազատ և անկախ ըլլան, Ամերիկայի ընդհանուր ժողովին հպատակ չըլլան: Արդարև նոր ձայն մի է այս մեր ականջին, և առաջին անգամն է որ կը լսենք: Երևակայ ես իմ մտտիս փորձուեցայ խորհելու թէ ասիկայ ուրիշ բան չէ բայց պարզապէս երիցականութիւնը մեր ժողովրդեան խոր շելի ցուցնելու գիտում մը: Որովհետև աս չափը դիտենք որ, այդ կէտը երիցականութեան մէկ էական պայմանը չէ: Կան երիցական եկեղեցիներ որ Ամերիկայի ընդհանուր ժողովին «հպատակ» չեն, և «Ամերիկայի երիցական եկեղեցի» չեն կառավարուի, » ինչպէս Անդրիոյ, Սիլվիոյ և Եւրոպիոյ երիցական եկեղեցիները, Ես չեմ հասկնար ինչ բան կը հարկադրէ Հայաստանեայց Աւետարանական եկեղեցին, որ Ամերիկայի ընդհանուր ժողովին հպատակ ըլլայ և անկէ կառավարուի, երբ նա ընտրէ և օգտակար դատէ իրեն՝ կառավարութեան այդ ձևը: Ինչ տարբերութիւն կայ Սիլվիոյ Աւետարանական եկեղեցւոյն և Հայաստանեայց Աւետարանական եկեղեցւոյն միջև, որ մին կրնայ ազատ և անկախ ըլլալ, իսկ միւսը չի կրնար: Ընդհանրապէս այսպիսի առիթներու մէջ հեթանոս երկիրներու առաքելութեանց ընթացքը մեղի օրինակ կը բերուի, — Չինաստան, Հնդկաստան և այլ հեթանոս երկրներու մէջ միտոնարը այսպէս ըրած են եղեր, — մեզի ինչ փոյթ, այդ մեր վրայ Աստուածային կանոն է: Մենք այլ և այլ պարագաներու տակ և բազում անգամ առիթ ունեցած ենք ըսել, և ահա հոս ալ կը հարկըրիմ կրկնել, թէ Պատ. միտոնարը շատ կը սխալին երբ մեզ հեթանոսական դարձերու կարգ կը դասեն ու անոնց հետ կը համեմատեն:

Թէ որ իրաւ իրաւ Աւետարեբի Պատ. Խմբագրոյն ըրածին պէս այդ է պատճառ որ միտոնարը լաւաբոյն համարեցան Բողոքական Հայոց եկեղեցին արդի անկազմ և քայքայուկ վիճակին մէջ թողուլ և պահել, շատ մեծ սխալմունք ըրած են, որովհետև տեղ չունէր այդ վախը, Հայաստանեայց Աւետարանական եկեղեցին թէ որ ուղէ կրնայ ինք իր մէջ միայնակ երիցութիւն մը կազմել, ամենայնիւ ազատ և անկախ Ամերիկայի երիցական եկեղեցիէն, ինչպէս որ են Սիլվիոյ և այլ երիցական եկեղեցիք:

Իմ համոզումն այս է որ, ժողովական կոչուած կառավարական ձևին տակ Հայ Աւետարանական եկեղեցիք որոշ և հաստատեալ կազմակերպութիւն մը առնելու երբէք չի պիտի յաջողին, ինչպէս մինչև ցարդ եղած փորձերէն պարզ տեսնուած է:

Գիտնալու ենք որ այդ տեսակ ակնարկութիւններ կարի կը շփոթեն հասարակութեան միտքը, և հետեւանք կը ըլլայ արդի տարրամ վիճակը յարատեւել:

ՀԱՅ ԱՌԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՈՄՆ

1874, հոկտ. 4.

ՅԱՒԱՆԻ ՀՐԱԺԵՏ ՄԸ

... Խմբագիր

Յաւօք սրտի կը լսեմք թէ Պարտիզակի դպրոցին առաջին դասատու Մեծ. Գէորգ Էֆէնտի Շիրինեան իւր հրատարականը տուեր է, ի սպառ հրատարակող դպրոցի դասատուութեան, և պիտի մեկնի յԱտափազար, տեղւոյն դպրոցին դասատուութեան պաշտօնն ստանձնելու:

Երբ սոյն տրտմանի ըլլան լսեցինք զարմացանք և միանգամայն ցաւ դրացինք, որովհետև քաջ կը ճանչէինք Շիրինեան Էֆէնտի արժանաւորութիւնը սոյն փափուկ պաշտօնին մէջ:

Շիրինեան Էֆէնտի արդէն ծանօթ է հանրութեան իւր ընտիր տաղանդովը և ընդուող իտուութեամբը, որ իբր 10—12 տարիներէ ի վեր ամենայն յաջողակութեամբ կը կատարէր սոյն ծանր և փափուկ պաշտօնը, Պարտիզակցիք արդէն անհունա երախտապարտ են սոյն տաղանդաւոր և բանիրուն դասատուին, և նորա անդուլտանքն է որ այսօր ուսումնասիրութեան մէջ կը փայլին, անշուշտ նորա այս հրատարակած արձուագ մի է սոցա ուսումնասիրման, և միանգամայն ամօթ և նախատինք խաւարեալ մասին, որ չէ կարողացեր մի արժանաւոր ամսական վճարել նմա:

Ո՛հ քանի թշուառ պիտի լինին Պարտիզակի անուս մանկիկք որ այսպիսի ընտիր, խմատուն և բարեբարոյ դասատուի մը հովանաւորութեան պիտի զրկուին. ո՛հ սոցա ապագան ահազին վիճ մի կը նկատուի...: Եղուի, դարձեալ կ'աւեմ, եղուի Պարտիզակցւոց, որ տակաւին տղիտուութեան թանձր խաւարին տակ կը ճնշուին, և չեն ճանաչեր արժանաւորի մը յարգը և ըստ արժանոյն վարձատրել, և այժմ երեսի վերայ կը թողան դպրոցը որ անուս մանկուհիք տղիտուութեան մէջ թափառին զրկուելով այսպիսի արժանաւոր և բանիրուն դասատուի մը հսկողութեան:

Եւ դու, Հայր պատուական, երթ բարեան, անշուշտ ընտանեացդ ապագան լաւ տրամադրելու համար կը հրատարակեք և կ'ընթաց ուրիշ տեղ վարել սոյն ծանր և փափուկ պաշտօնը: ... Խմբագիր, յայտնելով իտրին շնորհակալութիւնքս կ'աղաչեմ մի անկուն շնորհել բարեհաճիք սոյն փորձիկ գրութեանս:

Որով մնամ երախտապարտ

Յ. Յ. Ղ.

1874 հոկտ. 10, ի Կ. Պօլս:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

... Խմբագրապետ

Պատուական լրագրիք 107^{րդ} թուով սոյն խորագրով հրատարակեալ յօդուածի մը վրայ 118^{րդ} թուոյց մէջ ընթացող Մեծ. Բարունակ Էֆէնտի կողմանէ հրատարակեալ կարի բանաւոր և իրաւացի գիտողութիւնք, որ ոչ երբէք պիտի կարենային անոնցմէ տարբեր առարկութիւններ ընել, եթէ լրագրոյց 114^{րդ} թուով, Պր. նամակազրին նոյն նամակին վրայ ընելիք գիտողութիւններու խոստումն կատարելի: Կ'ապասէի տեսնալ թէ ինչպէս պիտի կարենար Պր.*** ը' հաստատել թէ այդ ազգային միացման

ժամանակը հասած է, բայց դեռ աղբանը չ'առայ հրատարակուած:

Իմ դարձափարս ու համոզումն, ինչպէս և Մեծ Բարունակ Էֆէնտի համոզումն, այս է, որ վաղ ընդ փոյթ բարեհաճի Մեծ. Աղբապետ Յակոբ Էֆէնտի ժողովրդական երեսփոխանութիւնն և բարեկարգ վարչութիւն մը հաստատել ի Կ. պօլս, որով և ամենայն դժուարութիւնք պիտի վերանան:

Շատ դրեցի և շատ խօսեցայ այս բանին վրայ և հիմա կ'ուզեմ քիչ մ'ուղ ըսել վասն զի յուսահատած եմ թէ մեր ժողովրդէն պիտի կարենայ տիրանալ այս վեհ ու փառաւոր սկզբան. մինչ դեռ ժողովրդեան խիստ մեծամասնութիւնն կարծես անզոյ արձան մ'է կեցած: Յաւալի ճշմարտութիւն:

Ռոտտուոյ 1874 ՄԻՆՐԱՆ Հոկտ. 2/14

ՉԻՆԱՍՏԱՆԻ ԲԱՆՏԱՐԿԵԱԼԸ

Չինաստանի կայսրերէն մին, երբ որ իր հօրը յաջորդեց, հրաման ըրաւ (բայի գողութեան և մարդասպանութեան համար բանտարկեալներէն) որ բոլոր բանտարկեալներուն աղատութիւն շնորհուի: Աղատութիւն ընդունողներուն մէջ՝ ծեր և խեղճ մարդ մը կը գտնուէր, որնոր գրեթէ իւր երիտասարդութեան ժամանակէն այն սոսկալի մութ բանտը իբրև իւր բնակարանը եղած էր, և իւր բանտարկեալ օրերուն թիւը միայն իւր տխուր խոռոչին դրանը վրայ զըծուած գիծերէն կարող էր դիտեալ, որն որ ասան և ութ հազար երկու հարիւր ութսուն օրեր՝ այսինքն յիսուն տարի չափ:

Գողգոշուն անդամներով և տատանեալ քայլերով, ձգեց իւր տըրտմանութեան պալատը, և քանի որ այն ընտանէն դուրս կելլէր, աչքերը պայծառ լոյսին շողումէն կը թմարէին, և բնութեան երեսնից իրրև կատարեալ դրախտ մը կերեւէր իրեն. և կորհնէր մեծն կայսրը որ այս պարզեղ իրեն շնորհած էր:

Իւր սիրելի հայրենիքը բաւական հեռու էր իւր մթազին արդիւնէն, ուստի սկսաւ անհամբեր քայլերով գիմել դէպի իւր քաղաքը որպէս զի չուտով իւր սիրելի մանուշոյն և որդիներուն փայտայանքը վայելէ:

Վերջուպէս հաղիւ թէ կարող եղաւ գտնալ այն թաղը ուր աստեօք իւր վայելչագեղ բնակարանը կը կենար, և ամէն նոր քայլ առած ատենը սիրտը կրկնապատիկ արիւթեամբ կը լեցուէր, և յնձու թեամբ յառաջ կը խաղար իւր բոլորտիքը շրջապատող դեղնակու թիւները զննելով, բայց իւր տեսածները ամէնն ալ նոր կը թուէին իրեն, և հաղիւ թէ անոնցմէ մէկ քանիները առաջ տեսած ըլլար: Փառաւոր չէնք մը շինուած էր իւր տանը տեղը, և իւր դրացիներուն տուներն ալ քակուած էին: Ինչաւ իւր առաջի բարեկամներէն մին չը տեսաւ որպէս զի տեղեկութիւն ստանայ իւր ընտանեաց վրայով, և քանի որ յառաջ կերթար այս խորհելով, խեղճ աղբատի մը հանդպեցաւ որ ճամբուն վրայ կեցած էր և կողբար իւր թըշուառութեանը վրայ:

Երբ բանտարկեալը խղճալով այս աղբատ և իրեն նման ծեր մարդուն վրայ, կայսրէն ընդունած պարզեւէն

իրեն ալ մտա տուաւ . բայց աւանդ . արդեօք ինչ պիտի ընդունէր իւր ըրած բարութեանը փոխարէն : Այս . այն աղբարտէն իմացաւ իւր սիրելի կնիքը աղբարտութեան ծոցը բլրալը . որն որ զինչը դառնապէս վշտացոյց . և նաև , թէ իւր որդիներն ալ ճակատողրին հետեւելով հետու և անձանօթ կրիմաներ գայած էին . և ան . դուրմ մահն ալ իւր սիրելի և թանկագին բարեկամները դերեղման իջնուցած էր :

Երբ այս ցաւալի գուժերը առաւ , սիրտը ամենադառն կակիծներով լեցուած վերտալին կայսեր ներկայութեանը դարձաւ , « Ով մեծք իշխան , ըստ վշտագնեալ սրտիւ , իրկէ զիս ետ այն բանտը ուրկէ սխալ սղորմութիւն մը զիս ազատեց . որովհետև տեսած հաճոյքներս զիս յաւետկը նեղեն . քան կը զուարճայրենն , և ինչ շահ ողբմութեան վտանգներու մէջ ապրիլէ , երբ տակաւին ծարաւէս պիտի պարտիմ , — այն տխուր բանտին մէջ իմ ցաւս մէկ մ'էր , իսկ երբ դուրս ելայ հազարներ պատեց » :

Թարմանեաց յԱնգղիստեան ՄԱՆԿԱՍԱՐ Մ . ՄԱՆԿԱՍԱՐԵՆՆ Աշտիկա Ռոպրոկեան վարժ .

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԵՐԼԻՆ

Բաւական ծանր կերպարանք առած է Բրուսելոյ և բոլոր Գերմանական կայսրութեան մէջ Արիմ կամի բանաարկութեան խնդիրը : Կերտի թէ կոմը ամենին միտը չունի իրմէ պահանջուած զբաղմունքները , յանձնեւելու , իսկ կառավարութիւնն ալ որոշած է ամէն խողարկութիւնն ընել և ամէն միջոց բանիցնել մինչև որ զանք երևան հանէ , և երբ վիսյութիւններով ստուգուի և ապացուցուի , թէ իրօք կառավարութեան վերաբերեալ պաշտանական գրութիւններ են անոնք , զորս իւր իր անձնական սեփականութիւնը պահեր է և կը մերժէ տալ , յանժամ ըստ օրինի պիտի դատապարտէ և պատժէ զայն : Կոմը թէ և հիւանդացած է և հիւանդանոց իրկուած է , սակայն քննութիւնները և խողարկութիւնները կը շարունակեն : Քննիչ պաշտանատարներ փարիզ իրկուեցան , հան դեսպանատան մէջ բաները քննելու և արդի դեսպանին հետ բանակցելու և անոր վկայութիւնները տանելու :

Իւր ընտանիքը ուղից դատի ժամանակը կէս միլիոն թաւր որտանդ գնելով կոմը բանաարկութեան աղատեալ բայց չի յաջողեցաւ :

Լրացրաց խօսքին նայելով Գերմանիոյ բոլոր հասարակութիւնը չափազանց ցաւ կը յայտնէ , կամին այսպէս խայտառակութեան և անկամը վրայ կայսեր ալ շատ հաճելի եկած չէ , բայց օրէնքը այսպէս կը տրամադրէ և ոչ ոք կրնայ դիմադրել : Ուր օրէնքը հզոր է , հան արդարութիւնը անխայ կը գործէ , անձի և պատուի սկսածութիւն չընէր :

ԽԱՌՆ ԼՈՒՐՆԵՐ

Այս տարուան երաշտութիւնը միայն Մայրաքաղաքին յատուկ չէր , զրկիլէ ամէն անդ նոյն ցաւը ունէին : աշնան ամիսները մտան , զրկիլէ անձրևի երես շտեսան առ հասարակ բո-

լոր զաւառներուն մէջ , և երկրադորժք յետին յուսահատութեան մէջ ինկած կողբային : Թղթատարութեան տեսուչ Վեսեմ : Սայլմ էֆէնարի եօթանասուցի չափ քաղաքներու և դիզաքաղաքներու ցուցակ մը իրկած է Լէվանթի Հէրալտի , և մեծ ուրախութեամբ կը ծանուցանէ թէ այս Բշօր հեռագրու լուր ընդունած է յիշեալ եօթանասուցի չափ սեղերէն որ տուած անձրևներ եկած են բոլոր այն կողմերը ի մեծ գոհունակութիւն և յուրախութիւն բոլոր բնակչոյ , որով հիմա սկսած է երկրադործներուն երեսը խնդալ : Երկինք երբեմն մեր դէպի իրեն վստահութիւնը կը փորձէ , թէ և սղորմութիւնը խաղաղ չարգիլէր , և կուզէ որ մեք ալ իր սէրը և հաւատարմութիւնը փորձենք : Բայց սպասու որ մարդիկ առ հասարակ շատ հեռու են այդ սեղերէն : Մենք չի դատած ժամանակին կը տրտնջանք և կազաղակներ , իսկ գտած ժամանակինս ձայն անգամ չենք հաներ իբր թէ մեր անհաղառակիլ իրաւունքը :

Մեծ Եպարքոսի հրամանաւ ներկայ Բամաղան ամառն մէջ Բ . Դրան պաշտանատարները կիրակի և երեքշաբթի օրերը գոյ պիտի ըլլան :

Այս երեքշաբթի օր Ռուսաստանցի հաշակաւոր Հայազգի պատկերհանր՝ Մեծ . Այլաղբայրի , Ռուսաց դեսպանատան առաջին թարգման Մ . Օնտի և ճարտարապետ Սարգիս պէյի ընկերակցութեամբ Վեհ . Սալթանին ներկայանալու պատիւ ունեցաւ : Այս առթիւ նորին վեհափառութիւնը ջերմ ողբով յայտնեց իւր բարձր հաւանութիւնը համբաւեալ ճարտարին ունեցած մեծ տաղանդին վրայ , որոյ ձեռքին ելած զանազան գեղեցիկ նկարներն արգէն երջող Բեռլին պատերուն փառաւոր դարձն եղած են , և ի նշան իւր բարձր գոհունակութեան Օտմանիէի երկրորդ կարգի պատուանշանը շնորհեց :

Կայսերական բժշկական տոեանին նախագահ Վեսեմ . Տօքթօր Սէրփիէն էֆէնարի երկրորդ կարգի Ռուսի սասիճան շնորհուեցաւ :

Անցեալները ծանուցած էինք որ , Մայրաքաղաքին մէջ կայսերական հրամանաւ ջրանկիրաց կանանաւորեալ զուեղ մը պիտի կազմուի , որոնք եւրոպական սճալ կանանաւոր կրթութիւն պիտի ունենան : Այս զուեղը կազմելու համար որոշեալ Մասնատուով այս Բշօր Սպարապետի գօռը իւր առաջին նիստը ունեցաւ , ուր ներկայ էին նաև Աւստրիոյ ջրանկիրաց զուեղին հրամանատարներէն հրաւրեալ կանները , որոնք մանրամասնաբար նկարագրեցին և բացատրեցին ժողովին առջև Եւրոպական քաղաքներու մէջ թէ հրգեհը մարելու , թէ պատահմունքները արգիլելու համար գործածուած կերպերուն և միջոցներուն վրայով : Հասկցուածին նայելով ժողովը հաւանած և որդեգրած է շոգեշորթ մեծ ջրհաններու գործածութիւնը , որք հասած տեղերին հեղեղ կը հանեն և շատ բարձր կը նստան ջուրերը : Արգէն հրաւէր եղած է որ , այս զուեղին գրուիլ ուղղը Սպարապետի գօռը կը թայ , ներկայանայ :

Իրբ երկու շաբաթ ստեղ պատահած հրգեհներուն ձայնը քիչ մը պոկուեցաւ , բայց շարժուա սկիզբը կրկին նորոգուեցաւ : Ենցեալ կիրակի լուսնալու դիշեր Ղալաթիա Թափհանէ երթալու ճամբուն վրայ դեռ Լուսաւորայ եկեղեցին չի գայած շիտակ ճամբուն վրայ կողի լուսուեր ծախողի մը մազաղայէն հրգեհ ելնելով , առն խանութ վեց կտոր չէնք այրեցաւ :

Տան մէջ խողովակով կաղ առնողները պարտին շատ արթուն և զգուշ ըլլալ , որպէս զի կամ բաց մնալով և կամ խողովակ ծակելով , կաղը տան կամ սենեակին մէջ չի լեցուի : Եւրթթուս Բերա տան մը մէջ ծանր վտանգ մը տեղի գտած է այս երեսէն : Կաղը լեցուեր է սենեակին մէջ , բայց տան տէրը չի դիտարկուլ , ճրողը ձեռքը սենեակին է մտեր և իսկոյն ահուելի պայթում մի է եղեր և խեղճ մարդը կիսամեռ մնացեր է : Մօտը գտնուող ոտորկանները հրացանի ձայն կարծելով վաղեր եկեր են , և այսպէս յաջողեր են բոցերը մարել :

Ղալաթիոյ և Բերայի մէջտեղ շինուած ստորերկրայ երկաթուղոյն շինութիւնը աւարտելու վրայ է , և կը կարծուի թէ մինչև Պայրամ կը բացուի : Արգէն քանի մը անգամ փորձեր եղան շատ յաջող կերպիւ , վերջին անգամը , որ անցեալ կիրակի օր եղած է , ամբողջ գիծին վրայ թէ վայէն թէ վարէն կառքերը երթիկեկեր են զարմանալի դիւրութեամբ , և մեքենան ալ սպասուածէն աւելի յաջողութեամբ գործեր է : Վերի ծայրի կայանը և ճամբաները ամբողջ լինցած են , և Ղալաթիոյ կայանն ալ քիչ օրէն կը լինայ :

Բերայի թողարկուող իրերը արգէն որոշած ըլլալով Բէրլինի պաշտօնի վողրը լայնեղ , երեք ամիս պայմանաժամ տալով ծանոց նոյն փողոյն մէջ գտնուած միւրանոցներուն որ պարպեն , քանզի պայմանաժամը լրանալուն չենքերը պիտի վրջուին :

Կիմանանք որ Կեսարիոյ Հայ Աւետարանական Եկեղեցւոյն Հովիւ Պատ . Բէրուլէ որ այժմ Սիւրիոյ մէջ է , շատ կաշխատի հան բարեւէր անձանց կարեկցութիւնը շարժել փոքր Ասիոյ սովորաւոր տուապետաց վրայ : Այս անգամ Պոլիս բնակող Պատ . Թոմարի ձեռամբ 120 Անդղիական ոսկի խորհուած է Լաթիպուրիէն , որ Կեսարիոյ եկեղեցւոյն հոգարարութեանը յանձնուի այն կողմերը գտնուած տուապետաց մատակարարելու համար :

ԾԱՆՈՒՑՄՈՒՆԲ
ՍԻԼՎԻՈ ԲԵԼԼԻՅՈ
ԲԱՆՏՔ ԻՄ
ԲԱՐԳՄԱՆԵՍ
Կ. Ս. ԻԹԻԻՃԵԱՆ
ԵՐԿՐՈՐ . ՏՊԱՐՈՒԹԻՆ

Այս ընտիր գրքին առաջին տպագրութիւնը սպասուած ըլլալով Երկրորդ անգամ իւր ընծայուած է Արամեան Տպարանէն ի գին 2 ֆր .

ՁԵՐՄԻ ԴԵՂ
Տօքթօր Ա . Երի այս գեղն ալ ոչ թէ միայն Եւրոպիոյ եւ Ամերիկայի ժողովուրդները , այլ նաև Տաճկաստանի մէջ ալ արգէն շատերը կը գործածեն և անոնք որ ուրիշ միջոցներով վերայիշեալ դառն արտաէն չեն աղտոսած՝ Տօքթօր Ա . Երի այս բաղադրութեան գործածութեամբ քիչ ատենի մէջ բժշկուի թիւնն գտած են : Չկայ գեղ մը որ ասոր չափ օգտակար ըլլայ ջերմի և հասարակորէն սոջմարո կոչուած գեղի միջոցաւ շատերը թէպէտև ժամանակաւոր կերպիւ բժշկուած են , սակայն ամենուն ծանօթ է որ Սոլֆաթիոյ չափազանց գործածութիւնը մեծամեծ վնասներ յառաջ կը բերէ : Տօքթօր Ա . Երի ջերմի գեղը ոչ թէ միայն զերծ է այդ տեսակ վնասներ յառաջ բերելէ , այլ նորա միջոցաւ հիմնովին բժշկուեցն զատ ջերմի կենթակայ երջանակը դարձեալ իր նախկին առողջութիւնն աւելցուցուց իւր կտանայ : Գրքերն ամենցած են , կը ծախուի Միւսասեանի Ամերիկեան վաճառատները :

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ

ՕՍՄԱՆԵԱՆ ՈՍԿԻՆ 100 ՂՐԵ .
11 Հախնալներ

Բամպակ Ատունս	ժխա .	—
» 4 յլէ	»	77 8 — 8
» Երկայտոս	»	3 — 4
Բուրդ Երկարիւր լուսուած	»	42 — 43
» 4 ասարիս	»	42 1/2 — 43
» » սղորտ	»	53 1/4 — 6 1/4
» Էնկիւրիւ	»	6 — 6 1/4
» Էնկի շէֆր	»	7 1/2 — 7 1/4
Թիֆթիլ Էնկիւրիւ	»	39 1/2 — 41
Մորմ . կովու . լիքս 125 .	»	9 — 12
» ոչխարի »	»	9 1/2 — 20
Աֆիւն . Մալաթիա	»	450 — 480
Խաւիճ . ըստ տեսակին Լ . 100	»	4020 — 4380
Շարքար . տակառով . կենդ	»	236 — 238
Պղպեղ	»	40 1/2 — 40 3/4
Չէս Լ . 107	»	6 1/4 — 6 1/2
Լեզակ . Պենկալ	»	410 — 150
Միսակ	»	24 — 26
Պոպատ . Լ . 100	անտուկը	210 — 215
Կապուր »	կենդ .	165 — 170
Թիսեղ »	զոյղ ստուակ	310 — 345
Երկամ . Անդղ .	կենդ	80 — 82
Յորեն . Լ . 125 . Բուճիլի կարծր . բոս .	»	33 — 36
Գարի .	»	46 1/2 — 47
Բ . Պրալ (կազ) Լ . 100 Ամբ . սնտուկ	»	52 — 55
Սորմանչէթ	»	68 — 75
Ապակի . սնտուկը .	Ֆրանք	20 — 21 1/2
Մեղրամոմ Ասիոյ	»	25 1/2 — 26

ԴՐԱՄԱԿԱՆ

ԸՆԹԱՅԻՆ ԱՐԺԷԹՒԹՈՅ
Հոկտ . 11

Ընդ . Պարս . Արժ . բաց . . .	49 50
բարձր գին . . .	49 51
ցած " . . .	49 25
Բումիլի Արժ .	Յր . 125
" " " " . . .	—
Փոխառ . 69ր .	271
65ր .	546
65ր .	540
Ստիէթէ Ժէնէրալ Լ . Ս .	7 25
Բրէտի Օսթ-Թիւրք . " " .	—
Գոնձատան 1852ր . " " .	—
Ստիէթէ Օթտուան " " .	—
Պանք ար Գոնձ . " " .	—
Բրէտի Ժէնէրալ Լ . Ս .	41 25
Պանք Վէրիսի " " .	—
Թրամիլլ " " .	4 80
Փոխակցր . ի Լոնտ . եւմա .	108
" " " " " " " " .	25 20

ԸՆԹԱՅԻՆ ԳՐԱՄՈՅ
Օսմ . ուկին 100 ՂՐԷ . Ի հաշուով

Անդղ . ոսկի	109 14
Գաղ . "	87 10
Բօլ . "	89 10
Գրքար . "	51 15
Ճեղճակ մէջիտ տարր	101 20
Հինգնոց . "	104 20
Սէթուլք . "	104 50
Պղինձ	127 50

ՏԵՐ ԵՒ ՏԵՐՈՒԵՆ Խ . Հ . ՍԻՄՈՆ ԻԹԻԻՃԵԱՆ
ՏՊԱՐԱՆՈՒԹԻՆ ԱՐԱՄԵԱՆ
Կ . ՊՈԼԻՍ
Չամազգիւր փող . Ակրեան խան Թ . 13